ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» օգոստոսի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնոկանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **Տեղեկատվություն՝ մասնակցի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

<u>1-ին</u> չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լանս» ՍՊԸ-ին:
2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին << օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Եղիազարյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Է. Տոնականյան

(ստորագրություն)

Խ. Պետրոսյան

(ստորագրություն)

Ա. Հարությունյան

(ստորագրություն)

Է. Արզաքանյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Դ. Թովմասյան

(ստորագրություն)